

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N

200 Մ² ԵՎ ԱՎԵԼԻ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Գ)
(ՏԳՏԴ խմբ. 2՝ ծածկագիր 10-33)

< __ > _____ 201 թ.

տեսչության տարածքային մարմնի անվանումը	հասցե	հեռախոս
--	-------	---------

ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն
----------------------	----------------------------

ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն
----------------------	----------------------------

ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն
----------------------	----------------------------

Ստուգման սկիզբը (ամսաթիվ)՝ _____ ավարտ՝ _____

Տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը	ՀՎՀՀ
---	------

Տնտեսավարող սուբյեկտի հասցե	հեռախոս
-----------------------------	---------

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանուն, անուն, հայրանուն	հեռախոս
---	---------

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____

_____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

200 Մ² ԵՎ ԱՎԵԼԻ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

	Հարցեր	Այո	Ոչ	ԱՆ	Կշիռ 10 բալանի համակարգով	Հղումներ նորմատիվ իրավական ակտերին	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
I	Շենքերին, շինություններին, տարածքներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ							
1	Շինարարական հիմնատարրերը մշակված են հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով:				9	«1», գլուխ 3 կետ 27	1;2;3	
2	Նկուղային և ցուկուլային հարկերում լուսամուտային խորշերը խուլ փակված չեն:				8	«1», գլուխ 3 կետ 31	2	
3	Սանդղաբազուկների տակ գտնվող տարածքները ազատ են՝ չեն օգտագործվում առարկաների պահման համար:				9	«1», գլուխ 3 կետ 31	2	
4	Բացառությամբ հատուկ նշանակության սենքերի մնացած լուսամուտները ազատ են:				8	«1», գլուխ 3 կետ 31	2	
5	Արտաքին հրշեջ սանդուղքները գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 3 կետ 32	2	
6	Բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերից և շինություններից մինչև արտադրական կազմակերպությունները նվազագույն հակահրդեհային միջտարածությունները պահպանված են:				10	«3», հավելված 1 կետ 1	2	I*
7	Ավտոմոբիլային մուտքի դարպասների լայնությունը պակաս չէ 4,5 մետրից:				10	«2», կետ 5.37	2	
8	Հրշեջ ավտոմեքենաների անցման համար 5 հա և ավելի չափերի տարածքներով կազմակերպությունները ապահովված են ոչ պակաս քան երկու մուտքով:				10	«2», կետ 5.36	2	
II	Արտադրական կազմակերպություններ							
9	Արտադրական շինությունների վրայով այրվող, վառունակ հեղուկների, դյուրավառ փոշիների, այրվող գազերի փոխադրման խողովակաշարերի տարանցումը բացառվում է:				9	«1», գլուխ 16 կետ 167	2	
10	Պայթուցահրդեհավտանգ տեղամասերում, շինություններում, արտադրամասերում աշխատանքները կատարվում են կայծ չառաջացնող (գունավոր մետաղներ) կամ պայթուցաանվտանգության պահանջներին համապատասխանող գործիքներով:				9	«1», գլուխ 16 կետ 168	2	II*
11	Աշխատատեղերին այրվող, դյուրավառ հեղուկների մատակարարումը կատարվում է կենտրոնացված ձևով:				9	«1», գլուխ 16 կետ 170	2	
12	Աշխատատեղերին ոչ մեծ քանակության այրվող, դյուրավառ հեղուկների մատակարարումը				9	«1», գլուխ 16 կետ	2	

	կատարվում է անվտանգ (չկոտրվող, չպատռվող) տարայով:				170		
13	Պատերի, առաստաղների տեխնոլոգիական անցքերը պաշտպանված են հրապատնեշող սարքերով:			9	«1», գլուխ 16 կետ 171	2	
14	Թմբուկավոր չորանոցները, չոր տաշեղների և պայթյունավտանգ փոշու բունկերները, գլոցահաստոնները ունեն հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգեր:			9	«1», գլուխ 16 կետ 179	2	
15	Թմբուկավոր չորանոցները, չոր տաշեղների և պայթյունավտանգ փոշու բունկերները, գլոցահաստոնները ունեն պայթույնը կանխարգելող սարքավորումներ:			9	«1», գլուխ 16 կետ 179	2	
16	Գազային, օդագոլորշային խցիկների օդանցքները սարքավորված են հրակասեցնող կափույրներով:			9	«1», գլուխ 16 կետ 189	2	
III	Տարահանման ճանապարհներ						
17	Տարահանման ճանապարհների պատերը և առաստաղները երեսապատված են չայրվող շինանյութով:			9	«1», գլուխ 3 կետ 41	2	
18	Տարահանման ելքերի դռները բացվում են դեպի դուրս:			9	«1», գլուխ 3 կետ 40	2	
19	Շենքից տարահանման ելքերի քանակը պակաս չէ երկուսից, եթե դրանում տեղավորված են սենքեր, որոնք պետք է ունենան ոչ պակաս քան տարահանման երկու ելք:			10	«5», կետ 6.14	2	III*
20	Տարահանման երկու և ավելի ելքերի առկայության դեպքում դրանք տեղակայված են ապակենտրոնացված:			10	«5», կետ 6.15	2	
21	Նկուղային (ցոկոլային) հարկերից, որի սենքերում օգտագործվում կամ պահվում են այրվող նյութեր, առաջին հարկի սենքեր տանող սանդուղքների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:			9	«5», կետ 7.23	2	
22	Նկուղային (ցոկոլային) հարկերում վերելակների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:			9	«5», կետ 7.26	2	
23	Սանդղավանդակների բնական լուսավորությունը ապահովված է արտաքին պատին սարքավորված 1,2մ ² մակերեսով պատուհանների միջոցով:			9	«5», կետ 6.35	2	
24	Առանց մշտական աշխատատեղերի, ինժեներական սարքավորանքի սպասարկման համար նախատեսված «Ա», «Բ» կարգի սենքերի ամենահեռավոր կետից մինչև մոտակա ելքը հեռավորությունը չի գերազանցում 25մ:			9	«16», կետ 6.1	2	
IV	Էլեկտրասարքավորումներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ						
25	Հրդեհավտանգ հիմնատարրերով տանիքների, վրայով օդային էլեկտրահաղորդման գծեր			9	«1», գլուխ 4 կետ 47	2	

	անցկացված չեն:						
26	Էլեկտրաբաշխիչ վահանակները կահավորված են գործարանային արտադրության ապահովիչներով:			9	«1», գլուխ 4 կետ 48	2	
27	Օգտագործվում են պահպանիչ ցանցերով և ճկուն հաղորդագծերով շարժական էլեկրտալուսատուներ:			9	«1», գլուխ 4 կետ 51	2	
28	Լուսատուներից մինչև այրվող նյութից պատրաստված կառուցվածքները և իրերը պահպանված է ոչ պակաս քան 0,5 մետր հեռավորություն:			10	«1», գլուխ 4, կետ 52	2	
V	Ջեռուցման և օդափոխման համակարգերին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ						
29	Ջեռուցման համար օգտագործվում են գործարանային արտադրության սարքեր:			9	«1», գլուխ 5 կետ 57	2	
30	Կաթսայատներում հեղուկ վառելանյութ պահեստավորված չէ:			9	«1», գլուխ 1 կետ 59	2	
31	Օդափոխիչ համակարգի ինքնաշխատ անջատման սարքավորումները գտնվում են սարքին վիճակում:			9	«1», գլուխ 5 կետ 68	2	
32	Կցակառույց կաթսայատան պատից հեռավորությունը մինչև մոտակա պատուհանը հորիզոնական ուղղությամբ պակաս չէ 4 մետրից:			9	«25», կետ 1.8	2	
33	Կցակառույց կաթսայատան տանիքից հեռավորությունը մինչև մոտակա պատուհանը ուղղահայաց ուղղությամբ պակաս չէ 8 մետրից:			9	«25», կետ 1.8	2	
34	Տանիքածածկին տեղակայված կաթսայատունը ունի անմիջական ելք դեպի տանիքածածկ:			9	«25», կետ 3.10	2	
35	Կաթսայատան տանիքը դյուրանետ է, կամ յուրաքանչյուր 1 մ ³ ծավալի համար նախատեսված է 0,03 մ ² մակերեսով բացվածք:			9	«25», կետ 3.16	2	
36	Կաթսայատունը կահավորված է հրշեջ ծորակներով սարքավորված ներքին հակահրդեհային ջրագծով:			9	«25», կետ 17.6	2	
37	Կաթսայատունը անմիջապես տեղակայված չէ 50 և ավելի տեղով մարդկանց ներկայությամբ սենքերի վրա կամ սենքերի տակ:			9	«25», կետ 1.8	2	
VI	Հակահրդեհային ջրամատակարարման ցանցեր						
38	Շինություններին (այդ թվում նաև հակահրդեհային ջրամատակարարման աղբյուրներին) հրշեջ փրկարարական ուժերի և միջոցների մոտեցումը ստուգվողի կողմից փակված չէ:			10	«5», կետ 8.14	2	
39	25000 մ ³ և ավելի ծավալով շինությունների արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է ոչ պակաս քան 2 հրշեջ հիդրանտ:			10	«7», կետ 8.16	2	
40	Հիդրանտների տեղակայման համար նախատեսված ջրագծի տրամագիծը փոքր չէ 100 մմ-ից:			10	«7», կետ 8.46	2	
41	Հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված			10	«1», գլուխ 6 կետ 76	2	

	են փողակով և փողրակով:						
42	500 մ ³ -ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված են հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 վ/վրկ ջրի շիթով:			10	«8», կետ 6.1 աղյ 2	2	
43	Շենքում թվով 12 և ավելի ներքին հրշեջ ծորակների առկայության դեպքում ներքին հակահրդեհային ջրագիծը միացված է արտաքին օղակավորված ջրագծի տարբեր տեղամասերին երկու մուտքագծով:			10	«8», կետ 9.1	2	
44	Հրշեջ հիդրանտների և ջրավազանների սպասարկման շառավղային գոտիները չեն գերազանցում 200 մ:			10	«7», կետ 9.29	2	
45	Ներքին հակահրդեհային ջրագծում ճնշումը բարձրացնող հրշեջ պոմպերի հեռահար գործարկման էլեկտրական թողարկիչները տեղադրված են հրշեջ ծորակների համար նախատեսված արկղերում:			10	«8», կետ 12.22	2	
VII	Հրդեհի ազդանշանման և հրդեհաշիջման համակարգեր						
46	Կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված են հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգերով:			9	«1», գլուխ 7 կետ 81	2	IV*
47	Կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով:			9	«1», գլուխ 7 կետ 81	2	IV*
48	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է լիազոր մարմնին:			9	«1», գլուխ 7 կետ 81	2	
49	3000 մ ² և ավելի մակերեսով տարածք ունեցող արտադրական շենքերի ու շինությունների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է ռադիոկապի միջոցով:			9	«1», գլուխ 7 կետ 81	2	
50	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են սարքին վիճակում:			9	«1», գլուխ 7 կետ 100	2	
VIII	Հրդեհաշիջման սկզբնական միջոցներ						
51	Օբյեկտն ապահովված է հրդեհաշիջման սկզբնական միջոցներով:			10	«1», բաժին VIII կետ 504	1;2	V*
52	Կրակմարիչները տեղադրված են հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա:			9	«1», բաժին VIII կետ 512	2	
53	Առկա է արտադրական վտանգավոր օբյեկտը արտադրական վտանգավոր օբյեկտների			9	«9», հոդված	1	

	ռեեստրում գրանցման վկայականը:				19 կետ ժդ		
54	Արտադրական վտանգավոր օբյեկտում առկա է տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացություն:			9	«9», հոդված 19 կետ ժբ	1	

Ծանոթություն: Նախավերջին սյունակում 1- փաստաթղթային ստուգում:
2- ակնադիտարկում:
3- լաբարատոր ստուգում:

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա.

1 – ՀԱԿ- «Հրդեհային անվտանգության կանոններ» - հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263 հրամանով, հավելված 1:

2 – ՀՀՇՆ III-9.02-02-03 «Արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր հատակագծեր»:

3 – ՍՆԻՊ 2.07.01-89 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»:

5 – ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

7 – ՍՆԻՊ 2.04.02-84* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»:

8 – ՍՆԻՊ 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի»:

9 – «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին:

16 – ՀՀՇՆ IV-11.03.01-04 «Արտադրական շենքեր»:

25. - ՍՆԻՊ II-35-76 «Կաթսայական կայանքներ»:

I*- Բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերից և շինություններից մինչև տարբեր նպատակային նշանակության պահեստները (բաց հարթակները) կախված շինության հրակայունության աստիճանից նորմերով պահանջվող հակահրդեհային միջտարածությունները.

Շինության հրակայունության աստիճանը	Կախված շինության հրակայունության աստիճանից հեռավորությունը, մ,		
	I, II	III	IIIa, IIIb, IV, IVa, V
I, II	6	8	10
III	8	8	10
IIIa, IIIb, IV, IVa, V	10	10	15

Շենքերի օրինակելի կոնստրուկտիվ բնութագրերը.

Շենքերի կոնստրուկցիաների հրակայունության աստիճանը	Կոնստրուկտիվ բնութագրերը
I	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարային, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են՝ թերթավոր և սալիկային չայրվող նյութերի օգտագործմամբ:
II	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարային, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են, օգտագործվում են թերթավոր և սալիկային չայրվող շինանյութեր: Շենքերի ծածկերում կարելի է օգտագործել չպաշտպանված պողպատե կոնստրուկցիաներ:
III	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարային, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են: Միջհարկային ծածկերի համար կարելի է օգտագործել փայտե կոնստրուկցիաներ, պաշտպանված ծեփասվաղով կամ դժվար այրվող թիթեղային, ինչպես նաև սալիկային նյութերով: Ծածկի տարրերին հրակայունության և կրակի տարածման սահմանների վերաբերյալ պահանջներ չեն ներկայացնում, ընդ որում ձեղնահարկի ծածկի փայտե կոնստրուկցիաները ենթարկվում են կրակապաշտպան մշակման:
IV	Շենքեր, որոնք հիմնականում ունեն կարկասային կոնստրուկտիվ սխեմա: Կարկասի տարրերը՝ պողպատե և այլ մետաղական անպաշտպան, ամբողջական կամ սոսնձային փայտանյութով և ուրիշ այրվող կամ դժվար այրվող նյութերով, որոնք կրակի և բարձր ջերմաստիճանի ազդեցությունից պաշտպանված են ծեփասվաղով կամ այլ չայրվող նյութերով: Պատող կոնստրուկցիաները՝ պողպատե պրոֆիլավորված թերթով կամ այլ չայրվող թերթավոր և դժվար այրվող ջերմամեկուսիչ նյութերից են: Ընդ որում, ձեղնահարկի փայտե կոնստրուկցիաները ենթարկվում են կրակապաշտպան մշակման:
V	Շենքեր, որոնց կրող և պատող կոնստրուկցիաների հրակայունության և կրակի տարածման սահմանների նկատմամբ պահանջներ չեն ներկայացվում:

II*- Շինությունների պայթյունահրդեհավտանգավորության կարգը.

N/N	Շինության կարգը	Շենքերում և սենքերում գտնվող նյութերի բնութագիր
1	«Ա» պայթյունահրդեհավտանգ	28°C-ից ոչ ավել բռնկման ջերմաստիճան ունեցող այրվող գազեր, դյուրավառ հեղուկներ՝ այն քանակությամբ, որ կարող են ստեղծել պայթյունավտանգ օդագազագուրջային խառ-նուրդներ, որոնց բռնկման ժամանակ շինությունում առաջանում է 5 կիլոպասկալը գերազանցող պայթյունի հաշվարկային ավելցուկային ճնշում: Ջրի, օդի, թթվածնի և միմյանց հետ փոխազդելիս պայթելու և այրվելու ընդունակ նյութեր այն քանակությամբ, երբ առաջանում է 5 կիլոպասկալը գերազանցող պայթյունի հաշվարկային ավելցուկային ճնշում:
2	«Բ» պայթյուն-	28°C-ից ոչ ավել բռնկման ջերմաստիճան ունեցող այրվող

	նահիրդեհավտանգ	փոշիներ կամ մանրաթելեր, այրվող հեղուկներ՝ այն քանակությամբ, որ կարող են ստեղծել պայթյունավտանգ փոշետոբային կամ օդագոլորշային խառնուրդներ, որոնց բռնկման ժամանակ շինությունում, առաջանում է 5 կիլոպասկալը գերազանցող պայթյունի հաշվարկային ավելցուկային ճնշում:
3	«Վ» հրդեհավտանգ	Դյուրավառ, այրվող և դժվար այրվող հեղուկներ, կոշտ այրվող և դժվար այրվող նյութեր: Նյութեր, որոնք ընդունակ են միայն այրվել ջրի, օդի թթվածնի կամ միմյանց հետ փոխազդելիս, պայմանով, որ այն շինությունները, որտեղ դրանք առկա են չեն պատկանում «Ա» կամ «Բ» կարգերին:
4	«Գ»	Տաք, շիկացած կամ հալված վիճակում գտնվող չայրվող նյութեր, որոնց մշակումը ուղեկցվում է ճառագայթային ջերմություն, կայծի և բոցի անջատմամբ: Այրվող գազեր, հեղուկներ և կոշտ նյութեր, որոնք օգտագործվում են, որպես վառելանյութ:
5	«Դ»	Սառը վիճակում գտնվող չայրվող նյութեր:

III*- Ոչ պակաս քան տարահանման երկու ելք պետք է ունենան.

ա) տաս մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված մանկական նախադպրոցական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների մասնագիտացված տների (ոչ բնակարանային), հիվանդանոցների, ինտերնատ-դպրոցների և մանկական հիմնարկների ննջարանային մասնաշենքերի սենքերը,

բ) տասնհինգ մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված նկուղային և ցուկուլային հարկերի սենքերը, 50 մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված սենքերը,

գ) առավել բազմաթիվ հերթափոխում հինգ մարդուց ավելի աշխատողների թվաքանակով արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների Ա և Բ կարգի սենքերը, 25 մարդուց ավելի - Վ կարգի կամ 1000 մ² ավելի մակերեսով սենքերը,

դ) Արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների բաց հարկաշարերը և հարթակները, նախատեսված սարքավորման սպասարկման համար, Ա և Բ կարգի սենքերի համար - 100 մ² ավելի հարկաբաժնի հատակի մակերեսի դեպքում և 400 մ² ավելի - այլ կարգի սենքերի համար,

ե) երկու հարկերում (մակարդակներում) տեղադրված բազմաբնակարան բնակելի շենքերի սենքերը (բնակարանները), վերին հարկի տեղադրման 18 մ-ից ավելի բարձրության դեպքում, դրանք պետք է ունենան տարահանման ելքեր յուրաքանչյուր հարկից:

IV*- Հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով օբյեկտների համալրման չափանիշներ ներկայացված են «1»-ի հավելված 4-ում.

Պահպանվող օբյեկտների տեսակը	Պահանջվող հակահրդեհային համակարգեր	
	ՀՀԱԻԿ	ՀՏԱԻՀ և ՀՏԱՓԻՀ
Շենքեր	Նորմատիվ ցուցանիշներ	
1. Այրելի պոլիմերային ջերմամեկուսիչներով և մետաղական թեթև կառուցատարրերով միահարկ շենքեր		
2. Հացահատիկի պահպանման և վերամշակման	-----	Անկախ մակերեսից և

համար շենքեր և շինություններ		հարկայնու-թյունից
2.1. Հացաթխման, հացաբուլկեղենի արտադրամասեր	-----	Անկախ մակերեսից
3. Արդյունաբերական և հասարակական շենքերի մալուխային շինություններ	100 մ2 ավելի	100 մ2-ից և պակաս
4. Արդյունաբերական և հասարակական շենքերի համակցված թունելներ, որոնցում տեղակայվում են 220Վ և բարձր լարման մալուխներ և հաղորդալարեր, հետևյալ քանակով.		
4.1. 100մ ³ և ավելի ծավալով	12 հատ և ավելի	5-ից մինչև 12 հատ
4.2. 100մ ³ -ից պակաս ծավալով	-----	5 հատ և ավելի
5. Մալուխային թունելներ և ամբողջությամբ փակ ստորասրահներ (այդ թվում համակցված), անցկացված արդյունաբերական շենքերի միջև	-----	50 մ ³ և ավելի
6. Քաղաքային մալուխային հավաքիչներ և թունելներ (այդ թվում համակցված)	-----	Անկախ մակերեսից և ծավալից
7. Մալուխային կառույցներ, որտեղ անցկացված են մետաղական խողովակներով յուղալեցուն մալուխներ	-----	Անկախ մակերեսից
8. Հրդեհապայթումավտանգավորության <<Ա>> և <<Բ>> կարգերի, որտեղ օգտագործվում են դյուրաբոցավառ և այրելի հեղուկներ, այրելի հեղուկացված գազեր, այրելի փոշիներ և թելքեր (բացառությամբ ավտոլցավորման կայանների (այդ թվում նաև բեռնարկղային տիպի), ինչպես նաև դրանց կազմում գտնվող խանութների, կրպակների ու տաղավարների և սենքերի, որոնք տեղակայված են հացահատիկի պահպանման և վերամշակման համար շենքերում և շինություններում)	300մ ² և ավելի	300մ ² -ից պակաս
9. Ալկալիական մետաղների առկայությամբ, դրանք հարկերում տեղակայման դեպքում.		
9.1. Կիսանկուղային հարկերում	300մ ² և ավելի	300մ ² -ից պակաս
9.2. Վերգետնյա հարկերում	500մ ² և ավելի	500մ ² -ից պակաս
10. Հրդեհային վտանգավորության Վ1 կատեգորիայի (բացառությամբ սենքերի, որոնք տեղակայված են հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում և շինություններում), դրանք հարկերում տեղակայման դեպքում.		
10.1. Նկուղային և կիսանկուղային հարկերում	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
10.2. Վերգետնյա հարկերում (բացառությամբ 35-42 կետերում թվարկվածների)	300մ ² և ավելի	300մ ² -ից պակաս
11. Հրդեհային վտանգավորության Վ2-Վ3 կատեգորիայի (բացառությամբ սույն հավելվածի 10-18 կետերում թվարկվածների և սենքերի, որոնք տեղակայված են հացահատիկի պահպանման և վերամշակման շենքերում և շինություններում), դրանք հարկերում տեղակայման դեպքում.		
11.1. Նկուղային և կիսանկուղային հարկերում		
ա) Անմիջապես դեպի դուրս ելքեր չունեցող	300մ ² և ավելի	300մ ² -ից պակաս
բ) Անմիջապես դեպի դուրս ելքերի առկայության դեպքում	700մ ² և ավելի	700մ ² -ից պակաս
11.2. Վերգետնյա հարկերում	1000մ ² և ավելի	1000մ ² -ից պակաս
12. Յուղանկուղներ	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից

13. Պատրաստման սենքեր. այլումինի փոշուց կախույթների, ռետինե սոսինձների, դյուրաբոցավառ և այրելի հիմքերով. լաքերի, ներկերի, սոսինձների, մածիկների, տոգորման բաղադրությունով. ներկման, սինթետիկ կաուչուկի պոլիմերացման, գազոտուրբինային շարժիչներով ճնշակասարահների, նավթի կրակային ջեռուցիչների սենքեր: Հեղուկ վառելանյութով աշխատող շարժիչներին շարժաբերով միացված գեներատորների սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
14. Բարձրավոլտ փորձարկումների սրահների սենքեր, այրելի նյութերով էկրանավորված սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
15. Այլ վարչական և հասարակական նշանակության սենքեր, այդ թվում կցակառուցված և ներկառուցված	-----	Անկախ մակերեսից

V*- Շենքերը և շինությունները ձեռքի կրակմարիչներով ապահովելու չափանիշները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակներում.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ ²	Հրդեհի դասը	Փրփրային և ջրային կրակմարիչներ 10 և տարրողությամբ	Փոշային կրակմարիչներ տարրողությամբ, և			Ֆրեոնային կրակմարիչներ 2(3) և տարրողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարրողությամբ և	
					2	5	10		2	5(8)
1.	Ա.Բ.Վ. այրվող գազեր և հեղուկներ	200	A	2++	-	2+	1++	-	-	-
			B	4+	-	2+	1++	4+	-	-
			C	-	-	2+	1++	4+	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2+	1++	-	-	2++
2.	Վ	400	A	2++	4+	2+	1+	-	-	2+
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2++	1+	2+	4+	2++
3.	Գ	800	B	2+	-	2++	1+	-	-	-
			C	-	4+	2++	1+	-	-	-
4.	Գ.Դ.	1800	A	2++	4+	2++	1+	-	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	2+	2++	1+	2+	4+	2++
5.	Հասարակական շենքեր	800	A	4++	8+	4++	2+	-	-	4+
			E	-	-	4++	2+	4+	4+	2++

Սույն աղյուսակում ամրագրված՝ տարբեր դասերի հրդեհների մարման համար փոշային կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում, «A» դասի համար ABC(E) փոշի, «D» դասի համար՝ (D):

Սույն աղյուսակում՝

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

Շենքերը և շինություններն, ըստ մակերեսի, օդափրփրային, համակցված, փոշե, և ածխաթթվային կրակմարիչներով ապահովվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ ²	Հրդեհի դասը	Օդափրփրային կրակմարիչներ (փրփուր) 100լ տարողությամբ	Համակցված կրակմարիչներ (փրփուր, փոշի) 100լ տարողությամբ	Փոշե կրակմարիչներ 100լ տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ լ.	
							25	80
1.	Ա,Բ,Վ (այրվող գազեր և հեղուկներ)	500	A	1++	1++	1++	-	-
			B	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	2+	-	-
2.	Գ (բացի այրվող գազերից և հեղուկներից)	800	A	1++	1++	1++	-	-
			D	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	1+	-	-

Սույն աղյուսակում ամրագրված տարբեր դասերի հրդեհների օջախների հրդեհաշիջման համար փոշու և համակցված կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում.

1) «A» դասի համար՝ ABC(E) փոշի.

2) «B», «C» և «E» դասի համար՝ BC(E) կամ ABC(E) փոշի.

3) «D» դասի համար՝ D փոշի:

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

200 Մ² ԵՎ ԱՎԵԼԻ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻ

Սույն ստուգաթերթում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) այրվող նյութ՝ ինքնուրույն, կրակի աղբյուրի հեռացումից հետո այրվող նյութ.
- 2) դյուրավառ հեղուկ՝ բաց անոթում 61°C-ից ցածր բռնկման ջերմաստիճան ունեցող հեղուկ.
- 3) դյուրավառ փոշի՝ հեշտ այրվող, նպաստավոր պայմաններում պայթյունի հատկություն ունեցող փոշի.
- 4) հակահրդեհային միջտարածություն՝ շինությունից դեպի հարևան շինություններ կրակի տարածումը կանխարգելելու նպատակով նախատեսված տարածություն.
- 5) պայթյունահրդեհավտանգ՝ ջրի, օդի, թթվածնի կամ միմյանց հետ շփվելիս պայթելու և այրվելու ունակ նյութեր.
- 6) դյուրանետվող կոնստրուկցիաներ՝ ապակեպատ պատուհաններ և երդիկներ կամ պողպատե, ալյումինե և ասբոցեմենտի թերթերով և արդյունավետ ջերմապահպանիչներով ծածկեր:
- 7) հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ (<<ԱԻԿ)>՝ նախատեսված են հրդեհաշիջման և հրդեհի վայրի հայտնաբերման համար.
- 8) հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ (<ՏԱԻՀ)>՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդարարման համար.
- 9) հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգ (<ՏԱՓԻՀ)>՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդանշանը օբյեկտից կապի որևէ հնարավոր միջոցով լիազոր մարմնին հաղորդման համար.
- 10) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն.
- 11) հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, արկղ ավազով, դույլ, բահ, կեռածող, կացին:
- 12) հատուկ նշանակության սենքեր՝ դրամարկղային, արխիվային, պահեստային սենքեր: